ՀԱՆԳԻՍՏ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՊԱՌԱՃԵԱՆԻ

Տարոյս Ապրիլ 30-ին ի փէր հանգեաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երիցագոյն անդամներէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արեւելեան թեմի երկարամեայ հոգեւոր հովիւ Տ. Վարուժան ծ. վրդ. Գապառաճեան:

Հայր Սուրբի Տան Կարգը տեղի ունեցաւ Ուրբաթ Մայիս 7, 2004, երեկոյեան ժամը 7:30-ին՝ Էվընսթըն քաղաքին մէջ (Շիգակօ): Հանդիսապետն էր Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան: Ներկայ էին շրջանի եկեղեցականները, հոծ թիւով սգակիրներ եւ Էվընսթըն քաղաքի ոստիկաններ եւ հրշէջներ, որովհետեւ Հայր Սուրբը երկար տարիներ եղած է «բանակաերէց»:

Շաբաթ, Մայիս 8, 2004, Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան: «Ողջոյն»էն առաջ՝ Հայր Վարուժանի Վերջին Օծումը կատարեց թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան:

Դամբանական խօսքէն առաջ՝ առաջնորդ Սրբազան Հայրը կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի ցաւակցական հեռեւեալ նամակը.

Սրտի ցաւով տեղեկացանք Հոգեշնորհ Տ. Վարուժան ծայրագոյն վարդապետ Գապառաճեանի վախճանումին մասին:

Յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան բերում ենք Մեր ցաւակցութիւնը Ձեզ, Տիրախնամ Ձեր թեմի հոգեւոր դասուն, Հոգելոյս Հայր Սուրբի հարազատներին եւ բարեպաշտ հաւատացեալց:

Յաւ է Մեզ նուիրեալ ու նախանձախնդիր եկեղեցականի կորուստը: Հոգելոյս Հայր Սուրբը գովելի ապաստաւորութիւն է իրականացրել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցում՝ երկար տարիների հոգեւոր հովուութեամբ եւ եռանդուն ու նախանձա-

տոր գործունէութեամբ նպաստելով ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը Տէրունական վայրերում եւ Միացեալ Նահանգներում:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենազօրեն Աստուած, որ Տէրը հանգուցեալի արդար հոգին ընդունի երկնային երանական լուսեղէն յարկերում եւ Իր Սուրբ Հոգու Միութիւնամբ սփոփի բոլոր վշտացեալ սրտերը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր դամբանականին մէջ ի մասնաւորի ըսաւ.

Հայր Վարուժանի մեկնումը դէպի անդենական կեանք սուգի կը մատնէ իր ծիսականները, բարեկամները, հոգեւոր եւ միաբանակից եղբայրները: Հայր Սուրբին վախճանումը անգամ մը եւս մեզ դէմ յանդիման կը դնէ յաւիտենականութեան իրականութեան: Իր հոգեւոր երկարամեայ գործունէութեան ընթացքին, այսպէս գլխաւորներէն իւրաքանչիւրիս հետ, Հայր Վարուժան սերտ կապեր ունեցած է եւ այս կամ այն ձեւով ազդած մեր կեանքին վրայ, մեզ աւելի մօտեցնելով մեր Արարիչին: Այսօր ալ, դագաղին մէջէն իսկ մեզի կը պարգեւէ յիմոնեալ այդ իրականութիւնը:

Ս. Պատարագի աւարտին հանգուցեալ Հայր Վարուժանի մարմինը ամփոփուեցաւ տեղւոյն գերեզմանատան մէջ:

Թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի շրջաբերականի համաձայն թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Կիրակի Յունիս 12-ին մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ Հայր Վարուժանի վախճանման քառասունքին առիթով:

Հայր Վարուժան, աւազանի անունով Վռամշապուհ, ծնած էր Կ. Պոլսիս 1927-ին, եւ իր նախնակրթարանի ուսումը եւ Հայց. Եկեղեցւոյ մէջ իր ծառայութեան ոգին ստացած էր իր ծննդավայրին մէջ: Հայ Եկեղեցւոյ մէջ ծառայելու փափաքը 1947-ին զինք առաջնորդեց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան Ժառանգաւորաց Վարժարանը, որուն դասընթացքը աւարտելով՝ 1951-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ:

Ձեռնադրութենէն ետք ան շարունակեց իր ծառայութիւնը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց պատմական վանքին մէջ իբրեւ զինուորեալ միաբան՝ վարելով զանազան պաշտօններ, ինչպէս Ժառանգաւորաց Վարժարանի փոխ տեսուչ, Ս. Հրեշտակապետաց Վանքի եւ ժողովուրդի տեսուչ եւ հովիւ, Ամմանի Հայ Համայնքի այցելու հովիւ, Ուխտաւորաց Կարգադիր Յանձնախումբի ատենապետ եւ ուսուցիչ Ժառանգաւորաց եւ Սրբոց Թարգմանչաց վարժարաններուն:

1958 թուականէն սկսեալ, աւելի քան 45 տարիներ, Հայր Վարուժան իր նուիրեալ ծառայութիւնը շարունակեց Ամերիկայի Արեւելեան թեմին մէջ: Քառասունհինգ տարիներ շարունակ Աւետարանի խօսքերով եղաւ «հովիւ քաջ եւ բարի, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Անոր հոգեւոր ծառայութեան սահմանները տարածուեցան Միջին Արեւմտեան շրջանի մեր բոլոր եկեղեցիներէն ներս:

Իր հովուական պարտականութեանց կողքին՝ Հայր Սուրբը պարբերաբար ծառայեց նաեւ որպէս այցելու հովիւ Շիգակոյի եւ Հարաւային Ուիսքանսընի հայ համայնքներուն, ինչպէս Ռէյսինի (Ուիսքանսըն) Ս. Մեսրոպ եկեղեցւոյ, Շիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, Պէլվիլի (Իլլինոյզ) Ս. Շողակաթ եկեղեցւոյ եւ Ուսեթ Էլիսի (Ուիսքանսըն) Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ, Հարաւային Միլուոքիի (Ուիսքանսըն) Ս. Յարութիւն եկեղեցւոյ, Ուոքիկընի (Իլլինոյզ) Ս. Գէորգ եկեղեցւոյ եւ Փէյլըս Հայթցի (Իլլինոյզ) Ս. Յովակիմ եւ Անա եկեղեցւոյ:

Հայր Սուրբը նախագահն էր Հայց. Եկեղեցւոյ Միջին Արեւմտեան Շրջանային Խորհուրդին:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԷՄԻ